

Ա. ՎՇՏՈՒՆՈՒ ՄԻ ԳՐԱԿԱՆ ԾԱԾԿԱՆՎԱՆ ՄԱՍԻՆ

ՅՈՒՐԻ ՂՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Այս գրական ծածկանունը շատ հետաքրքիր պատմություն ունի: 1921 թ. Աղատ Վշտունին գործուղվում է Արևելք՝ Իրան և Իրաք, կազմակերպելու եղեռնից հրաշքով փրկված և այդ երկրներում ապաստան գտած հայերի հայրենադարձությունը: Բանաստեղծը նորից հնարափորություն է ունենում ավելի քան վեց ամիս մնալու Արևելքում: Այս նոր ճանապարհորդությունը զգալի չափով թարմացնում է այն հարուստ տպավորությունները, որ ստացել էր Ա. Վշտունին դեռևս վաղ պատանության տարիներին, և նա բանաստեղծական հարուստ մտահղացումներով վերադառնում է Հայաստան: Շատ չանցած նա դիմում է գրական միստիֆիկացիայի և Արևելքին նվիրված իր մի շարք նոր երգերով Սեյիդ էլ Նուր ստորագրությամբ հաճախակի հանդես գալիս «Խորհրդային Հայաստան» թերթի և նրա գրական հավելված «Պայքարի», ինչպես նաև «Մուրճի» ու «Մարտակոչի» էջերում: Վշտունու այդ բանաստեղծությունները տպագրվում էին «Արաբակուն նորագույն հեղափոխական բանաստեղծություն» կամ «Արաբական նորագույն գրականություն» ընդհանուր խորագրերի տակ, մատուցելով գրանք ուղպես թարգմանություններ՝ գոյություն չունեցող արաբ Սեյիդ էլ Նուր բանաստեղծից:

Առաջին անգամ Սեյիդ էլ Նուր ծածկանվամբ նրա «Կում, ես հուբերի» («Վեր կաց, սիրելիս») բանաստեղծությունը լույս տեսավ 1922 թ. «Խորհրդրդային Հայաստան» թերթի № 221-ում, ինչպես վերը նշվեց՝ իբրև թարգմանություն արաբ բանաստեղծից (այս բանաստեղծությունը հետագայում Ա. Վրշտունին տպագրել է «Ուղտ» վերնագրով): Թերթի նույն համարում Վշտունին գրել է նաև բանաստեղծ Սեյիդ էլ Նուրի կենսագրությունը, կանգ առնելով հատկապես նրա սոցիալական ծագման ու գրական կյանքի այլևայլ հարցերի վրա: Սեյիդ էլ Նուր ստորագրությամբ Վշտունու բանաստեղծություններն արժանանում են գրական մամուլի և ընթերցողների ջերմ սիրուն ու դրվատանքին, առանց իմանալու, որ դրանց հեղինակն Աղատ Վշտունին է:

Հետաքրքրական է, որ Սեյիդ էլ Նուր ստորագրությամբ Վշտունու բանաստեղծություններից «Մրրկող կանչը» (հետագայում այն վերնագրվել է «Իմ երգը») սկզբում պետք է տպագրվեր «Նորք» հանդեսում: Այդ է վկայում «Նորքին» ուղարկած Վշտունու այս բանաստեղծության ձեռագիրը՝ հանդեսի խմբագիր Աշ. Հովհաննիսյանի հետևյալ մակագրությամբ. «Ընդունել՝ նախօրոք համեմատելով բնագրի հետ»¹: Նույն արխիվում պահվում է նաև բանաստեղծի 1923 թ. մարտի 8-ի թվակիր նամակը՝ ուղղված «Նորքի» խմբագրությանը, ուր ասվում է. «Արաբերենից թարգմանած իմ «Մրրկող կանչ» բանաստեղծությունը խնդրում եմ չտպեք «Նորքում», որովհետև ես ցանկանում եմ մի քանի ուղղումներ մտցնել նրա մեջ»²: Այդպես էլ բանաստեղծությունը «Նորքում» չտպագրվեց և շատ չանցած՝ այն լույս տեսավ «Մուրճի» 1923 թ. № 4-ում (ապրիլ): «Մուրճում» տպագրվածի մեջ Վշտունին ոչ միայն մի քանի ուղղումներ. էր մտցրել, այլև միանգամայն նոր մասեր էր ավելացրել: Այսպես, «Նորքին» ուղարկված «Մրրկող կանչի» ձեռագիրը երեք մասից է, իսկ «Մուրճում» տպագրվածը՝ 5 մասից: Թվում է, թե «Նորքում» չտպագրելու

1 Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի արխիվ, ֆ. № 79:

2 Նույն տեղում:

պատճառը ոչ թե հեղինակի կողմից «մի քանի ուղղումներ մտցնելն» էր, այլ հանդեսի խմբագրի նման մակագրությունը: Աշ. Հովհաննիսյանի մակագրության համաձայն «Մրրկող կանչը» պետք է տպագրվելուց առաջ համեմատվեր բնագրի հետ, մինչդեռ, ինչպես հայտնի է, արաբերեն բնագիր գոյություն չունի: Որպեսզի այս բանաստեղծությունը պատճառ չդառնար իր ծածկանվան՝ Սեյիդ էլ Նուրի բացահայտմանը, Վշտունին դիմեց առանձին պատճառարանություններին:

Թերևս Սեյիդ էլ Նուր ծածկանունն էլ ավելի ուշ բացահայտվեր, եթե նույն ստորագրությամբ գրված բանաստեղծություններից մի քանիսը, առանց Վշտունու գիտության, տարբեր մարդկանց կողմից չթարգմանվեին և չտպագրվեին ուսական թերթերում, իբրև արաբ բանաստեղծից կատարած թարգմանություններ: Վշտունին ապագա թուրիմացությունները կանխելու համար ստիպված եղավ 1923 թ. ապրիլի 6-ին հանդես գալ «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությանն ուղղված նամակով, որ գրում է. «Հնկեր խմբագիր, թույլ տվե՛ք ինձ «Խորհրդային Հայաստանի» միջոցով հայտնել հետևյալը:

Վերջին ժամանակներս Երևանի հայ մամուլի էջերում լույս են տեսել «Արաբական նորագույն գրականություն» ընդհանուր վերնագրի տակ Սեյիդ էլ Նուր ստորագրություն կրող մի շարք բանաստեղծություններ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերոհիշյալ բանաստեղծություններից մի քանիսը զանազան անձնավորությունների կողմից թարգմանվել են ուսերեն և տպագրվել են Ռուսաստանի թերթերում, ապագա բոլոր թուրիմացությունները կանխելու համար սլարտք եմ համարում հայտարարել, որ Սեյիդ էլ Նուր անունով արաբ բանաստեղծ գոյություն չունի, այլ այդ բոլոր գրվածքների հեղինակը ես ինքս եմ: Այդ իսկ պատճառով հայտնում եմ նույնպես, որ այդ բանաստեղծությունները հայերենից օտար լեզուների թարգմանելու իրավունքը վերապահված է հեղինակին»:

Իսկ նույն թվականին «Մուրճի» «Լրատու» բաժնում կարգում ենք.

«Սեյիդ էլ Նուր

Հայտնի է արդեն, որ «Արաբ նորագույն գրականություն» վերնագրի տակ և Սեյիդ էլ Նուր ծածկանվան ներքո հայ մամուլի մեջ տպագրված բանաստեղծությունների հեղինակը ընկ. Ազատ Վշտունին է»³:

Ավելացնենք նաև, որ բանաստեղծի արևելյան Լոզերի անդրանիկ ժողովածուն՝ «Նեօ Օրիենտալիան», լույս է տեսել 1923-ին, հեղինակի արաբական տարազի լուսանկարով և ստորագրված էր Ազատ Վշտունի՝ փակագծերում ավելացնելով Սեյիդ էլ Նուր:

ОБ ОДНОМ ЛИТЕРАТУРНОМ ПСЕВДОНИМЕ

А. ВШТУНИ

ЮРИИ ОГАНЕСЯН

Резюме

В 1921 году правительство Армении командировало Азата Вштуни на Восток—в Иран и Ирак, для организации репатриации армян. Более чем через 6 месяцев он возвращается в Армению. Вскоре он обращается к литературной мистификации и со своими новыми песнями и под псевдонимом Сеид эл Нур выступает во многих газетах и журналах Еревана и Тифлиса. Эти стихотворения Вштуни печатались как переводы стихов не существующего арабского поэта Сеид эл Нура. Чтобы в будущем не было никаких недоразумений, Вштуни вынужден был 6 апреля 1923 г. обратиться с письмом в редакцию газеты «Хорурдан Айастан», где он признается, что как такового арабского поэта Сеид эл Нура не существует и что он сам автор этих песен.

³ «Մուրճ», 1923, № 4: